



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16226

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մայիսի 25-ի թիվ 85-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/55-Ա

**ՓԱՏՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Սարգսյանի, **խորհրդի անդամներ՝** Հարություն Հարությունյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեծլումյանի, Նելլի Հարությունյանի, Սեդրակ Ասատրյանի, Տարոն Սիմոնյանի, Արա Ղազարյանի և Տիգրան Խուրշուդյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

25.05.2017թ-ին Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Տիգրան Աթանեսյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր № 78) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

12.12.2016թ-ին Պալատում մուտքագրվել է քաղաքացի Նորիկ Մելիքյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) կողմից փոստային առաքման միջոցով ուղարկված 06.12.2016թ-ի դիմում-բողոքը (**այսուհետ նաև՝ Դիմում**):

Դիմողը հայտնել է, որ իր որդու՝ Տիգրան Մելիքյանի, շահերը պաշտպանելու համար դիմել է փաստաբան Տիգրան Աթանեսյանին, որի համար վճարել է 3000 (երեք հազար) ԱՄՆ դոլար (մեկ միլիոն երկու հարյուր հազար ՀՀ դրամ), որպեսզի իր որդու պաշտպանությունը տանի մինչև վերջ:

Դիմողը նշել է, որ Տիգրան Աթանեսյանը միտումնավոր կերպով բազմիցս չի ներկայացել քննչական և դատական պրոցեսներին, որը հանգեցրել է դրանց անհարկի

ձգձգմանը: Որդու մոտ արձանագրվել է սուր արյունահոսություն, որի կապակցությամբ վիրահատության անհրաժեշտություն է առաջացել, սակայն քանի որ որդին դեռևս դատապարտված չի եղել, պահանջվել է փաստաբանի ներկայությունը քրեակատարողական հիմնարկում՝ հիվանդության մասին կազմված արձանագրությունը վարչություն տանելու համար, սակայն Տիգրան Աթանեսյանը չի ներկայացել: Որդին շուրջ երկու ամիս քրեակատարողական հիմնարկում արյունահոսել է, և իր կրկնակի բողոքից հետո, ծանր վիճակում, տեղափոխվել դատապարտյալների հիվանդանոց՝ վիրահատության:

Այսպիսով, Դիմողն արձանագրել է, որ Տիգրան Աթանեսյանի ոչ պատշաճ վերաբերմունքի պատճառով իր որդին ստիպված է եղել երկու ամիս տառապել քրեակատարողական հիմնարկում:

Դիմողը նաև հայտնել է, որ Տիգրան Աթանեսյանը խաբեության միջոցով իրենից նորից վերցրել է 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք 2.000.000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ (22.01.2014) և մինչ օրս չի վերադարձնում նշված գումարը:

Ըստ Դիմողի, փաստաբան Տիգրան Աթանեսյանը ներկայումս հրաժարվում է իր որդու իրավունքների պաշտպանությունից՝ մինչև գործի ավարտը, և նորից լրացուցիչ գումար է պահանջում:

Դիմելով Պալատ՝ խնդրել է փաստաբան Տիգրան Աթանեսյանին զրկել լիցենզիայից և հետագա աշխատանքներ կատարելուց:

Սույն կարգապահական գործի նախապատրաստման փուլում Դիմողը տվել է նույնաբովանդակ բացատրություն, միաժամանակ, ծանոթանալով Պատասխանողի կողմից ներկայացված ծառայությունների մատուցման պայմանագրի էլեկտրոնային տարբերակի տեքստին, Դիմողը նշել է, որ դրա բովանդակությունն իր համար անծանոթ է, և եթե նա իմանար, որ պայմանագիրը կնքվում է 6 ամսով, ապա նման պայմանին չէր համաձայնվի:

Բացատրությամբ Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբաններ Ա. Սողոմոնյանին և Արա Զաքարյանին իր որդու գործով առաջին անգամ տեսել է առաջին ատյանի դատարանի դահլիճում, նրանք իրեն հայտարարել են, որ իրենց ուղարկել է Տիգրան Աթանեսյանը, սակայն դա ոչ Դիմողի, ոչ էլ իր որդու հետ համաձայնեցված չի եղել:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

28.12.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 509-Ա/ԿԳ-16226 որոշմամբ՝ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.8.3 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով:

30.12.2016թ. կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ստեփան Ոսկանյանը հայտնել է ինքնաբացարկ 11.01.2017թ. կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Հունան Բարայանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստերին Դիմողը ներկայացել է և պնդել է դիմումում նշված հանգամանքները:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանին առաջարկվել է դիմումի վերաբերյալ ներկայացնել գրավոր բացատրություն՝ անհրաժեշտության դեպքում կցելով դիմումում նշված փաստերը հերքող համապատասխան փաստաթղթեր, որի կապակցությամբ Պատասխանողը 16.12.2016թ. Պալատի info@advocates.am էլեկտրոնային փոստին է ուղարկել իր բացատրությունը և նյութեր՝ էլեկտրոնային տեսքով:

Փաստաբանը բացատրությամբ տեղեկացրել է, որ Դիմողի որդու՝ Տիգրան Մելիքյանի պաշտպանությունը ստանձնել է 03.12.2013թ. կնքված թիվ 33 պայմանագրի հիման վրա, որը կնքվել է նախաքննության համար, այնուհետև դատաքննության համար պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվել է: Իսկ Ն.Մելիքյանից ստացել է միմիայն փաստաբանական հոնորար:

Բացատրությամբ Տիգրան Աթանեսյանը նաև նշել է, որ Տ.Մելիքյանին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ դիտավորյալ սպանություն: Իր կողմից նախաքննության և դատաքննության ընթացքում կատարվել են բազմաթիվ գործողություններ, որոնք այս պահին չի նկարագրում՝ մեկ առ մեկ, դրանցում համոզվելու համար ըստ փաստաբանի՝ կարելի է պարզապես տեսնել կցվող փաստաթղթերի քանակը:

Տ.Աթանեսյանը նշել է նաև, որ առաջին անգամ Տ.Մելիքյանը դատապարտվել է 2015 թվականի գարնանը, ներկայացրել է վերաքննիչ բողոք (ընդհանուր ծավալը՝ 72 էջ), որը բավարարվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ դատավճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել նոր քննության: Երկրորդ անգամ առաջին ատյանի դատարանում գործի քննությանը ևս Տիգրան Աթանեսյանը մասնակցել է, իսկ

դատաքննության վերջում՝ Նորիկ և Տիգրան Մելիքյանների հետ փոխադարձ համաձայնության հիման վրա՝ հաշվի առնելով, որ դատարանի կողմից մերժվում էին բոլոր ներկայացվող միջնորդությունները, որը, ըստ չճշտված լուրերի, կապված էր այն հանգամանքի հետ, որ նախագահող դատավոր Ն.Հովակիմյանը պետք է տեղափոխվի աշխատանքի ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, ուստի դրսևորում է շտապողականություն, Տիգրան Մելիքյանը հրաժարվել է իր ծառայություններից և իրեն փոխարինել է փաստաբան Ա.Սողոմոնյանը:

Այդուհանդերձ, խախտելով, թե առկա պայմանավորվածությունները, թե պաշտպանական տակտիկան (պաշտպանության կողմի համոզմունքով, տուժող Թ.Մաթևոսյանը մահացել է ոչ թե ստացած մարմնական վնասվածքներից, այլ պատշաճ բժշկական օգնություն չստանալու հետևանքով), Տ.Մելիքյանը որոշել է ինքնուրույն պաշտպանվել, որի արդյունքում նա 30.11.2016թ. դատարանի դատավճռով ճանաչվել է մեղավոր և դատապարտվել 10 տարվա ազատազրկման:

Փաստաբան Տիգրան Աթանեսյանը նշել է նաև, որ Դիմողն իր որդու համար անբարենպաստ դատավճռի միակ պատճառով է, որ նման քայլի է դիմել, իսկ իր կողմից «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնների խախտում տեղի չի ունեցել:

Ինչ վերաբերում է Տ.Մելիքյանի հիվանդությանը, ապա փաստաբանը նշել է, որ Ն.Մելիքյանի բողոքը իր հետ որևէ կապ չունի, քանի որ Տ.Մելիքյանը իրեն հայտնել է, որ դիմել է ՔԿՀ բժշկին, իրեն տրվելու է ուղեգիր՝ վիրահատության համար, որևէ բողոքի կամ դիմումի կարիք չի եղել: Ըստ փաստաբանի՝ Տ.Մելիքյանը ստացել է ուղեգիր, տեղափոխվել է դատապարտյալների հիվանդանոց, որտեղ բարեհաջող վիրահատվել է, հիվանդության կապակցությամբ նրա որևէ իրավունք խախտված չի եղել:

Իր կողմից դատական նիստերի ձգձգումների հետ կապված Տիգրան Աթանեսյանը նշել է, որ պարզապես անգրագետ պնդում է, պաշտպանական տակտիկան ընտրել է իր պաշտպանյալի հետ միասին և որևէ անհարկի, անտեղի կամ անհարգելի ձգձգումներ տեղի չեն ունեցել:

Կարգապահական վարույթ հարուցելուց հետո Տ.Աթանեսյանը սահմանված կարգով ծանուցվել է բացատրություն տալու համար, սակայն բացատրություն չի ներկայացրել:

Կարգապահական վարույթի ընթացքում Պատասխանողը նախապատրաստողի էլ. փոստին ներկայացրել է նաև 02.12.2013թ. ամսաթվով պայմանագրի սկանավորած պատճենը, որը կցվել է վարույթին:

Սույն կարգապահական գործի քննության համար նշանակված կարգապահական նիստերին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել դրա օրվա, ժամի և վայրի մասին:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Հունան Բաբայանը, հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2017 թվականի փետրվարի 27-ին կազմել է եզրակացություն, ըստ որի վերջինս հաստատված է համարել հետևյալ փաստերը.

«1. փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև իրավական օգնություն ցույց տալուց հրաժարվելու մասով.

Փաստաբան Տիգրան Աթանեսյանը 02.12.2013թ. ստանձնել է Դիմող Նորիկ Մելիքյանի որդու՝ Տիգրան Մելիքյանի պաշտպանությունը:

Դիմողը Պատասխանողի՝ որպես անհապ ձեռնարկատիրոջ բանկային հաշվին փոխանցմամբ վճարել է 1.200.000 ՀՀ դրամ:

Վարույթի նախապատրաստման ընթացքում հնարավոր չի եղել պարզել Դիմողի կողմից ստորագրվել է արդյոք Տ.Աթանեսյանի կողմից նախապատրաստողին ներկայացված 02.12.2013թ. ամսաթվով պայմանագիրը (տես սույն եզրակացության 2 կետում Դիմողի բացատրությունները):

Պատասխանողը մասնակցել է Դիմողի տղայի՝ Տիգրան Մելիքյանի գործով դատական քննությանը:

«ԴԱՏԱԼԵՔՍ» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունների համաձայն՝

- *2013թ. մայիսի 15-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի պետ Թ.Շուշանյանի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 19112913 քրեական գործը:*
- *2013թ. մայիսի 16-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Վ.Մարտիրոսյանի որոշմամբ թիվ 19112913 քրեական գործով Տիգրան Նորիկի Մելիքյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:*
- *ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015թ. մարտի 31-ի թիվ ԼԴ/0065/01/14 դատավճռի համաձայն՝ Տիգրան Նորիկի Մելիքյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով:*

- ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 31.07.2015թ. որոշմամբ ամբաստանյալ Տիգրան Նորիկի Մելիքյանի և վերջինի պաշտպաններ Տիգրան Աթանեսյանի, Արա Զաքարյանի, Գուրգեն Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015թ. մարտի 31-ի դատավճիռը բեկանվել է և թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործն ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ այլ կազմով նոր քննության:
- ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (նախագահող դատավոր՝ Նարինե Հովակիմյան) 2016թ. նոյեմբերի 30-ի դատավճռով Տիգրան Նորիկի Մելիքյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 10 (տասը) տարի ժամկետով:

Դիմողը հայտնել է, որ Տ.Աթանեսյանը բազմաթիվ դատական նիստերի չի ներկայացել, չներկայանալու պատճառներն իրեն և դատարանին հայտնի չեն եղել: Չներկայանալու պատճառները պարզելու համար ինքը բազմիցս գնացել է Երևանում գտնվող Պատասխանողի գրասենյակ, սակայն նրան չի հանդիպել:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 28.10.2016թ. որոշման համաձայն. «...Տիգրան Աթանեսյանը անընդմեջ չի ներկայացել 04.10.2016թ., 07.10.2016թ., 10.10.2016թ. և 24.10.2016թ. նշանակված դատական նիստերին: 24.10.2016թ. նշանակված դատական նիստում ամբաստանյալ Տիգրան Մելիքյանը հայտարարել է, որ հրաժարվում է պաշտպան Տիգրան Աթանեսյանից, քանի որ վերջինս դատական նիստերին չի ներկայանում: Դատարանը հրաժարումն ընդունել է»:

Դիմողը բացատրությամբ հայտնել է, որ ինքը կամ տղան Տ.Աթանեսյանի ծառայությունից չեն հրաժարվել: Տ.Աթանեսյանը բազմաթիվ դատական նիստերի չի ներկայացել, դատարանը ստիպված հրավիրել է հանրային պաշտպան, սակայն իր տղան հրաժարվել է հանրային պաշտպանից և փաստացի մնացել է առանց պաշտպանի:

Դատական նիստերին չներկայանալու պատճառների վերաբերյալ Տ.Աթանեսյանը բացատրություն կամ այլ հիմնավորումներ չի ներկայացրել:

2. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից փաստացի չկատարված աշխատանքի մասով ստացած հոնորարը չվերադարձնելու մասով:

Պատասխանողն իր նախնական բացատրությամբ ընդունել է դիմողի հետ պայմանագիր կնքված լինելու, ինչպես նաև Դիմողից հոնորար ստանալու փաստը, սակայն հոնորարի չափը չի նշել: Պատասխանողն էլեկտրոնային եղանակով ներկայացրել է պայմանագրի օրինակ, որի՝

- 6.3 կերպի համաձայն՝ «սույն պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, մեղադրյալ Տիգրան Մելիքյանի կողմից, Կատարողին քննչական մարմնի կողմից քրեական գործի վարույթից հեռացնելով: Կատարողը կարող է միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Պարվիրատուն ավելի քան երկու բանկային օրով կուշացնի սույն Պայմանագրի 4.1 կետով սահմանված վճարումը, Պարվիրատուն կամ մեղադրյալը ցուցում կտան Կատարողին ակնհայտ ապօրինի կամ այնպիսի գործողության կատարման համար, որը կարող է վնաս պատճառել Կատարողի մասնագիտական համբավին կամ հակասում է Կատարողի համոզմունքներին»:

- 6.4 կերպի համաձայն՝ «Պայմանագրի 6.3 կետով սահմանված դեպքերում Պայմանագրի դադարեցման հետևանքով Կատարողի կողմից փաստացի սրացված գումարը Պարվիրատուին չի վերադարձվում»:

Տվյալ դեպքում, չունենալով դիմողի՝ նշված պայմանագրի բովանդակության և ստորագրված լինելու վերաբերյալ անվիճելի համարող վերջնական դիրքորոշում, ինչպես նաև փաստացի չկատարված աշխատանքի մասով հոնորարը վերադարձնելու վերաբերյալ պայմանագրով սահմանված դրույթ, հնարավոր չէ հետևություն հանգել գումարի վերադարձման կարգի վերաբերյալ»:

Վերոգրյալի հիման վրա գործը համարել է նախախտարաստված:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

01.03.2017թ. գործը հանձնվել է Խորհրդին: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի մայիսի 25-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 02.12.2013թ-ի «Իրավաբանական ծառայությունների մատուցման մասին» թիվ 33 պայմանագրով (**այսուհետ նաև՝ Պայմանագիր**) Դիմողը, որպես պատվիրատու, Պատասխանողին, որպես կատարողի, հանձնարարել է ՀՀ ոստիկանության քննչական մարմինների վարույթում քննվող քրեական գործով

իրականացնել մեղադրյալ Տիգրան Նորիկի Մելիքյանի պաշտպանությունը, *ինչը հաստատվում է Պայմանագրով, ինչպես նաև Դիմողի և Պատասխանողի բացատրություններով,*

2. Պայմանագրի 4.1 կետով սահմանվել է, որ Կատարողի վարձատրության չափը կազմում է 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ 6 ամսվա համար, իսկ 6.1 կետով սահմանվել է, որ Պայմանագիրը գործում է մինչև 6 ամիս ժամկետով, *ինչը հաստատվում է Պայմանագրով,*

3. Պայմանագրով պատվիրատու հանդիսացող Դիմողի ստորագրությունն առկա է միայն Պայմանագրի 3-րդ էջում, որը պարունակում է միայն պատվիրատուի և կատարողի տվյալներ, *ինչը հաստատվում է Պայմանագրով,*

4. թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով դատաքնության սկզբից Պատասխանողը ներգրավվել է որպես ամբաստանյալի պաշտպան, *ինչը հաստատվում է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 28.10.2016թ. որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում), ինչպես նաև Դիմողի և Պատասխանողի բացատրություններով,*

5. Դատարանի 2015թ. մարտի 31-ի թիվ ԼԴ/0065/01/14 դատավճռի համաձայն՝ Տիգրան Նորիկի Մելիքյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 10 (տասը) տարի ժամկետով, այնուհետև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 31.07.2015թ. որոշմամբ ամբաստանյալ Տիգրան Նորիկի Մելիքյանի և վերջինի պաշտպաններ Տիգրան Աթանեսյանի, Արա Զաքարյանի, Գուրգեն Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015թ. մարտի 31-ի դատավճիռը բեկանվել է և թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործն ուղարկվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ այլ կազմով նոր քննության, *ինչը հաստատվում է Դատարանի Որոշմամբ, ինչպես նաև Պատասխանողի բացատրությամբ,*

6. Պատասխանողն անընդմեջ չի ներկայացել 04.10.2016թ., 07.10.2016թ., 10.10.2016թ. և 24.10.2016թ. նշանակված դատական նիստերին, *ինչը հաստատվում է Դատարանի Որոշմամբ, ինչպես նաև Դիմողի բացատրությամբ,*

7. 24.10.2016թ. նշանակված դատական նիստում ամբաստանյալ Տիգրան Մելիքյանը հայտարարել է, որ հրաժարվում է պաշտպան Տիգրան Աթանեսյանից, քանի որ վերջինս դատական նիստերին չի ներկայանում, *ինչը հաստատվում է Դատարանի Որոշմամբ, ինչպես նաև Պատասխանողի բացատրությամբ,*

8. Տիգրան Աթանեսյանին որպես պաշտպան փոխարինել է փաստաբան Ա.Սողոմոնյանը, սակայն փաստացի Տիգրան Աթանեսյանը շարունակել է Տիգրան Մելիքյանի շահերի պաշտպանության իրականացումը, *ինչը հաստատվում է*

Պատասխանողի բացատրությամբ, ինչպես նաև «tatanesyana@gmail.com» և «naramelikyan@gmail.com» էլեկտրոնային փոստի հասցեների նամակագրությամբ /այսուհետ նաև՝ Նամակագրություն/,

9. Դիմողը Պատասխանողից պահանջել է իր զեկույցով ներկայանալ 2016թ-ի նոյեմբերի 28-ին նշանակված դատական նիստին, որի ընթացքում Տիգրան Մելիքյանը պետք է հանդես գար վերջին խոսքով, *ինչը հաստատվում է Նամակագրությամբ,*

10. Պատասխանողը Դիմողին հայտնել է, որ նա և պարոն Սողոմոնյանը պատրաստ են շարունակել Դիմողի որդու շահերի պաշտպանությունը միմիայն պայմանագրի երկարաձգման համաձայնագիր ստորագելու դեպքում, *ինչը հաստատվում է Նամակագրությամբ:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 25.05.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Տիգրան Աթանեսյանը փաստաբան է հանդիսանում 15.03.2001թ-ից: 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ առկա է 2 ընթացիկ վարույթ:

Տեղեկանքին կից ներկայացված հավելվածի համաձայն՝ կարգապահական վարույթները գտնվում են նախապատրաստման փուլում:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Աթանեսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար, իսկ 3.5.5, 3.8.3 և 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման մասով գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 1.4 կետի (Սահմանումներ) համաձայն՝

«(...) - վստահորդ – ֆիզիկական կամ իրավաբանական անձ (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու.

- պատվիրատու – վստահորդ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ կնքել է պայմանագիր վստահորդի շահերը ներկայացնելու համար (...):»:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր

հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն. «Փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը»:

Վերլուծելով վերը նշված նորմերի պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե.

1. արդյո՞ք Պատասխանողը բարեխիղճ և ժամանակին չի կատարել հանձնարարությունը, որը դրսևորվել է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելու (դատական նիստերին չմասնակցելու) միջոցով:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նշել, որ Կանոնագրքի իմաստով վստահորդ հասկացությունն ավելի լայն է, քան պարզապես պատվիրատու, ավելին, վստահորդի կարգավիճակը չի կարող նույնականացվել նաև որևէ դատավարական կարգավիճակին: Կանոնագրքում տարբերակում է ներառված վստահորդ-պատվիրատու հասկացություններում, այն պատճառով, որպեսզի հետագայում, եթե տարբեր սուբյեկտներ հանդիսացող պատվիրատուի և վստահորդի շահերի միջև հակասություն առաջանա, փաստաբանը տեղեկանա, թե ինչ վարքագիծ պետք է դրսևորի:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 20-րդ և այլ հոդվածների վերլուծությունից բխում է, որ այն պահից, երբ անձը դիմել է փաստաբանի օգնությանը և վերջինս էլ ստանձնել է իրավաբանական օգնություն ցույց տալու պարտականություն, նրանց մինչև առաջանում են փաստաբան-վստահորդ իրավահարաբերություններ, որոնք փաստաբանի վրա դնում են Կանոնագրքով նախատեսված բազմաթիվ պարտականություններ:

Տվյալ դեպքում, Խորհուրդը հաստատված է համարել այն հանգամանքը, որ 02.12.2013թ-ի «Իրավաբանական ծառայությունների մատուցման մասին» թիվ 33 պայմանագրով Դիմողը, որպես պատվիրատու, Պատասխանողին, որպես կատարողի, հանձնարարել է ՀՀ ոստիկանության քննչական մարմինների վարույթում քննվող քրեական գործով իրականացնել մեղադրյալ Տիգրան Նորիկի Մելիքյանի պաշտպանությունը:

Փաստորեն, նշված պահից սկսած, Տիգրան Մելիքյանը դարձել է Պատասխանողի վստահորդը (պատվիրատուն):

Բացի այդ, Խորհուրդը հաստատված է համարել նաև այն, որ Պայմանագրի 4.1 կետով սահմանվել է, որ Կատարողի վարձատրության չափը կազմում է 1.200.000 (մեկ

միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ 6 ամսվա համար, Պայմանագրի 6.1 կետով սահմանվել է, որ Պայմանագիրը գործում է մինչև 6 ամսի ժամկետով, իսկ Պայմանագրով պատվիրատու հանդիսացող Դիմողի ստորագրությունն առկա է միայն Պայմանագրի 3-րդ էջում, որը պարունակում է միայն պատվիրատուի և կատարողի տվյալներ:

Խորհուրդն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ Պատասխանողն իր բացատրության մեջ նշում է, որ 03.12.2013թ. կնքված թիվ 33 պայմանագիրը կնքվել է նախաքննության համար, այնուհետև դատաքննության համար **պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվել է:** Այն մասին, որ Պայմանագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը պետք է իրականացվեր նաև դատական ատյաններում, հայտնում է նաև Դիմողն իր բացատրություններով:

Փաստորեն, Պայմանագրի գործողությունը տարածվել է նաև քրեական գործի դատաքննության վրա, ինչը ենթադրում է վստահորդի շահերի պաշտպանությունը մինչև դատական ատյաններում գործի քննության ավարտը: Պայմանագրի որևէ այլ կետի, այդ թվում՝ վճարման ենթակա գումարի մասին պայմանի փոխադարձ համաձայնությամբ փոփոխված լինելու հանգամանքի մասին տվյալներ գործում առկա չեն:

Ավելին, նույնիսկ այն դեպքում, եթե Պայմանագրի գործողությունը երկարաձգված չլիներ, Տիգրան Մելիքյանը միևնույնն է չի դադարել Պատասխանողի վստահորդ/պատվիրատու լինելուց:

Այսպես, Խորհուրդը հաստատված է համարել այն, որ թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով դատաքննության սկզբից Պատասխանողը ներգրավվել է որպես ամբաստանյալի պաշտպան, և չնայած 24.10.2016թ. նշանակված դատական նիստում ամբաստանյալ Տիգրան Մելիքյանը հայտարարել է, որ հրաժարվում է պաշտպան Տիգրան Աթանեսյանից, քանի որ վերջինս դատական նիստերին չի ներկայանում, իսկ Տիգրան Աթանեսյանին որպես պաշտպան փոխարինել է փաստաբան Ա.Սողոմոնյանը, սակայն փաստացի Տիգրան Աթանեսյանը շարունակել է Տիգրան Մելիքյանի շահերի պաշտպանության իրականացումը:

Այդ մասին է վկայում թե՛ Պատասխանողն իր բացատրությամբ, նշելով, թե դա եղել է պաշտպանական տակտիկայի մաս, թե՛ Դիմողն իր բացատրությամբ, նշելով, որ փաստաբան Ա. Սողոմոնյանին իր որդու գործով առաջին անգամ տեսել է առաջին ատյանի դատարանի դահլիճում, նա իրեն հայտարարել է, որ իրեն ուղարկել է Տ. Աթանեսյանը, սակայն դա ոչ Դիմողի, ոչ էլ իր որդու հետ համաձայնեցված չի եղել:

Փաստորեն, թե՛ Դիմողը, թե՛ Պատասխանողն իրենց բացատրություններում նշում են, որ Ա. Սողոմոնյանին գործում որպես պաշտպան ներգրավելը կրել է ձևական բնույթ և կատարվել է Պատասխանողի կարգադրությամբ, ինչը ենթադրում է նաև վերջինիս կողմից Տիգրան Մելիքյանի պաշտպանության ղեկավարումը:

Այդ մասին է վկայում նաև Պատասխանողի բացատրության Նամակագրության մեջ առկա հետևյալ միտքն առ այն, որ Տիգրան Մելիքյանի կողմից ցուցմունք տալն իրականացվել է առանց Պատասխանողի գիտության, որին Պատասխանողը բացասական է վերաբերվում:

Ակնհայտ է, որ այն դեպքում, երբ Պատասխանողը գտնում է, որ ամբաստանյալի կողմից ցուցմունք տալը պետք է իրականացվեր իր գիտությամբ, ուստի վերջինս շարունակում է ղեկավարել վստահորդի շահերի պաշտպանությունը:

Այս առումով հատկանշական է, որ Նամակագրությամբ հաստատվում է նաև, որ Դիմողի որդին Պատասխանողի ծառայություններից փաստացի երբևէ չի հրաժարվել և մինչև վերջ ցանկացել է, որ իր շահերը ներկայացնի հենց Պատասխանողը, վերջինից պահանջելով 28.11.2016թ-ին ներկայանալ դատական նիստին և ներկայացնել պաշտպանական ճառը:

Վերոգրյալից ելնելով, Խորհուրդը գտնում է, որ անկախ այն հանգամանքից, թե Դիմողի և Պատասխանողի միջև կնքված պայմանագրի գործողությունը տարածվել է դատարանում Տիգրան Մելիքյանի շահերի պաշտպանության վրա, թե՛ ոչ, այն պայմաններում, երբ Պատասխանողը թիվ ԼԴ/0065/01/14 քրեական գործով դատաքննության սկզբից ներգրավվել է որպես ամբաստանյալի պաշտպան, և նույնիսկ ձևական առումով կորցնելով պաշտպանի կարգավիճակը, շարունակել է ղեկավարել Տիգրան Մելիքյանի շահերի պաշտպանությունը, ուստի Պատասխանողը ողջ դատաքննության ընթացքում հանդիսացել է իր վստահորդի՝ Տիգրան Մելիքյանի շահերը ներկայացնող փաստաբան:

Հետևաբար, նույնիսկ այն պայմաններում, երբ Պատասխանողը ձևական առումով կորցրել է պաշտպանի կարգավիճակը և Տիգրան Մելիքյանը դադարել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իմաստով վերջինիս պաշտպանյալը լինելուց, Պատասխանողը շարունակել է ղեկավարել Տիգրան Մելիքյանի շահերի պաշտպանությունը, և Տիգրան Մելիքյանը հանդիսացել է նրա վստահորդը, ուստի Պատասխանողը պարտավոր է եղել կատարել փաստաբան-վստահորդ իրավահարաբերություններից բխող՝ իր վրա Կանոնագրքով դրված պարտականությունները:

Մինչդեռ, Պատասխանողը ոչ միայն առանց հարգելի պատճառների չի ներկայացել 04.10.2016թ., 07.10.2016թ., 10.10.2016թ. և 24.10.2016թ. նշանակված դատական նիստերին, այլև անհիմն հրաժարվել է 28.11.2016թ-ի դատական նիստին ներկայանալ, դատական նիստին չի ներկայացել, չի կատարել վստահորդի հանձնարարության հետ կապված անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ չի ներկայացրել պաշտպանական ճառը, արդյունքում իր վստահորդին թողնելով անօգնական, անպաշտպան վիճակում:

Խորհուրդն անհիմն է համարում նաև Պատասխանողի այն պատճառաբանությունը, որ 28.11.2016թ-ին նշանակված դատական նիստին ներկայանալու համար անհրաժեշտ է ստորագրել պայմանագիրը երկարաձգելու մասին համաձայնագիր, քանի որ Պատասխանողն իր իսկ բացատրությամբ հայտնել է, որ կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագիրն արդեն իսկ երկարաձգված է եղել դատաքննության համար:

Հետևաբար, Պատասխանողը, որպես Տիգրան Մելիքյանի շահերը պաշտպանող փաստաբան, պարտավոր է եղել բարեխիղճ և ժամանակին կատարել վստահորդի հանձնարարությունը՝ ներկայանալ 04.10.2016թ., 07.10.2016թ., 10.10.2016թ., 24.10.2016թ. և 28.11.2016թ. նշանակված դատական նիստերին, կատարել հանձնարարության հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ներկայացնել պաշտպանական ճառ, կամ չընդունել հանձնարարությունը, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Վերոգրյալից ելնելով, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը, հանդիսանալով Դիմողի որդու՝ Տիգրան Մելիքյանի շահերի պաշտպանությունը ստանձնած փաստաբան, բարեխիղճ և ժամանակին չի կատարել հանձնարարությունը, որը դրսևորվել է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունները չկատարելու (դատական նիստերին անհիմն չմասնակցելու և անհրաժեշտ դատավարական գործողություններ, այդ թվում պաշտպանական ճառով հանդես գալու գործողությունը չկատարելու) միջոցով, ինչի արդյունքում Տիգրան Մելիքյանը զրկվել է իր պաշտպանության իրավունքը լիարժեք իրականացնելու հնարավորությունից, ուստի Պատասխանողի կողմից խախտվել են Կանոնագրքի 2.7.2 և 3.1.8 ենթակետերի պահանջները:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտումների վտանգավոր բնույթը, այն հանգամանքը, որ Պատասխանողը թույլ է տվել երկու կարգապահական խախտում՝ խախտելով և՛ փաստաբանի վարքագծի ընդհանուր սկզբունքներում սահմանված նորմի պահանջները, և՛ փաստաբանի և վստահորդի միջև հարաբերությունները կարգավորող կանոնի պահանջները, որոնց արդյունքում սահմանափակվել է իր վստահորդի հիմնարար իրավունքներից մեկը՝ պաշտպանության իրավունքը, ինչպես նաև փաստաբան Տիգրան Աթանեսյանի անձը բնութագրող հանգամանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել

կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը, որը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «տուգանք» կարգապահական տույժի տեսակը՝ 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Անդրադառնալով Կանոնագրքի 3.5.5, 3.8.3 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման հանգամանքին, Խորհուրդը գտնում է, որ կարգապահական գործի շրջանակներում չի ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կվկայեին փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից այս ենթակետերի խախտման փաստը:

Չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ փաստաբանի: Հետևաբար, Կանոնագրքի 3.5.5, 3.8.3 և 3.8.5 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի, 39.9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, Պալատի կանոնադրության 16.26 կետի «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր թիվ 78) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.5.5, 3.8.3, 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ ԿԳ-16226 կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբան Տիգրան Աթանեսյանին (արտոնագիր թիվ 78) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման համար:

3. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր թիվ 78) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեռնթոլոգիա թեմայով, 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն սրանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Սարգսյան